ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Երևանի պետական համալսարանի
Հումանիտար և հասարակագիտական
մասնագիտությունների գծով
պրոռեկտոր՝
Է. Ասրիյան

«19» 10 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կարեն Իսմայիլի Ալավերդյանի՝ «ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Քննարկմանը մասնակցում էին՝ «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մնացականյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Կ. Ներսիսյանը, տ.գ.թ., դոցենտ. Թ. Հովակիմյանը, տ.գ.թ., ասիստենտ Ռ. Ալեքսանյանը, ավագ լաբորանտ Ա. Սարգսյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրային ռեսուրսների կառավարման, դրանց արդյունավետ, օգտավետ ու խնայողաբար օգտագործման, արդյունքում՝ հասարակությանը որակյալ ու բազմաբնույթ ծառայությունների մատուցման համար պատասխանատու են կառավարությունները: Վերը նշված գործընթացի հաջողությունը մեծապես կախված է ֆինանսական հաշվետվողականության արդյունավետ համակարգի առկայությունից, որի հետ կապված երկրները բախվում են տարբեր մարտահրավերների:

Միջազգայնորեն ընդունելի հիմունքների համաձայն պատրաստված արժանահավատ ֆինանսական տեղեկատվությունը նպաստում է ռեսուրսների ներգրավման ու բաշխման վերաբերյալ արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը: Այն ի վերջո բարելավում է հաշվետվողականությունը, մեծացնում է հարկաբյուջետային թափանցիկության մակարդակը, ինչպես նաև հնարավորություն է տալիս ապահովել համադրելիություն ինչպես տարածաշրջանի, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների ֆինանսական հաշվետվությունների միջև:

ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների

շարունակականությունը, մասնավորապես ֆինանսական հաշվետվությունների համախմբման գործընթացն ապահովելու նպատակով շատ կարևոր է համապատասխան իրավական ու մեթոդական գործիքների առկայությունը, որով էլ պայմանավորված է հետազոտության անհրաժեշտությունը:

Հետազոտության ընթացքում բավարար չափով հիմնավորվել է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավման նպատակով դրանց պարբերաբար մշտադիտարկման կարևորությունն ու ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար արդյունավետ գործիքակազմի՝ համախմբման մեթոդաբանության անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առկա իրավիճակը, բացահայտել իրավական կարգավորման արդի խնդիրներն ու ներկայացնել վերը նշված խնդիրների լուծման և համակարգի կատարելագործման ուղիներ: Դրված նպատակի իրագործման համար ատենախոսությունում տարանջատվել են հետևյալ խնդիրները, որոնք պայմանավորել են հետազոտության տրամաբանությունը և կառուցվածքը.

- Ուսումնասիրել հանրային հատվածի կառուցվածքն ու ներկայացնել դրա հիմնական բնութագրերը,
- Ներկայացնել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդական հիմքերը,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածում հաշվապահական հաշվառման համակարգի զարգացման ընթացքը,
- Բացահայտել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առանձնահատկություններն ու ներկայումս ոլորտում առկա մարտահրավերները,
- Ուսումնասիրել հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի ապահովման հարցը՝ դիտարկելով դրանց մշտադիտարկման անհրաժեշտությունը,
- Ներկայացնել հանրային հատվածում ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար անհրաժեշտ գործիքակազմ,
- Ուսումնասիրել հաշվեգրման հիմունքով բյուջետավորման առկա միջազգային փորձն ու բացահայտել դրա կիրառման հեռանկարները ՀՀ-ում:

Ատենախոսության գիտական նորույթը

Աշխատանքում կատարված հետազոտություններն ու վերլուծությունները, առաջադրված հիմնախնդիրների դիտարկումը հանգեցրել են տեսական ու գործնական մի շարք արդյունքների, որոնցից գիտական նորույթ են՝

1. ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման նպատակով մշակվել և առաջարկվել է նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանություն,

2. Հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների անհրաժեշտ մշտադիտարկումն իրականացնելու նպատակով առաջարկվել է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության մշտադիտարկման ուղեցույց,

3. Հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության պահանջն առավել հասցեական դարձնելու նպատակով՝ մշակվել է մեթոդաբանություն, որով կորոշվեն հանրային հատվածի կազմակերպությունները, որոնց գլխավոր հաշվապահները պետք է լինի որակավորված, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունները պետք է հետագայում լինեն հրապարակման ենթակա:

4. Աշխարհի տարբեր երկրներում հաշվապահական հաշվառման և բյուջետավորման հիմունքների համեմատական վերլուծության հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ հանրային հատվածում հաշվեգրման հիմունքով հաշվապահական հաշվառման վարման փաստը, հիմնավորվել է ՀՀ-ում հաշվեգրման հիմունքով բյուջետային պլանավորման անհրաժեշտությունը,

5. Հանրային հատվածում գործող հաշվապահների մասնագիտական կարողությունների և գիտելիքների պատշաճ մակարդակի պահպանումն ապահովելու նպատակով՝ առաջարկվել է հանրային հատվածի հաշվապահների վերապատրաստումների վրա հիմնված՝ պարտադիր շարունակական մասնագիտական զարգացման համակարգի մոդել:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթները, գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման տեսական հիմքերն ու առանձնահատկությունները» գլխում հեղինակն անդրադարձել է հանրային հատվածի կառուցվածքին, ինչպես ազգային, այնպես էլ՝ միջազգային կարգավորումների մակարդակում, ներկայացրել դրանց հիմնական բնութագրերն ու չափորոշիչները: Անդրադարձ է կատարվել նաև հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում կիրառվող մեթոդական հիմքերին,

մասնավորապես՝ ՀՀՀՀՄՍ-ներին ու ԿՖԿ 2014-ին, ինչպես նաև վերջին տարիներին ՀՀ հանրային հատվածում հաշվապահական հաշվառման համակարգի զարգացումներին՝ ներկայացնելով համակարգի էվոլյուցիան:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորման գործիքակազմը» գլխում ներկայացվել են հաշվապահական հաշվառման գործող համակարգի առանձնահատկությունները՝ առանձնացնելով պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների՝ ՀՀ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացման կարևորությունը, միջազգային ստանդարտների համեմատությամբ ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշ-վառման ստանդարտի հիմնական տարբերությունները: Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության պարբերաբար մշտադիտարկման անհրաժեշտությանը, ինչն արժանահավատ ֆինանսական տեղեկատվության ապահովման կարևոր գործիք է: Հեղինակի կողմից մշակվել է պատշաճ մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության մշտադիտարկման ուղեցույց: Ներկայացվել են նաև տարբեր երկրներում հանրային հատվածի ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված առկա փորձը:

Ատենախոսության երրորդ՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորման կատարելագործման ուղիները ՀՀ-ում» գլխում հեղինակն անդրադարձել է ներկա փուլում կատարելագործման անհրաժեշտություն ունեցող մի քանի առանձին իրավակարգավորումների: Հեղինակի կողմից առաջարկվում է որակավորված գլխավոր հաշվապահ ունենալու, հետագայում նաև՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջ սահմանելու նպատակով կիրառել մասնավոր հատվածում կիրառվող մոդելը: Կարևորելով հանրային հատվածում գործող հաշվապահների գիտելիքների և մասնագիտական կարողությունների անհրաժեշտ մակարդակի պահպանման ապահովումը, հեղինակն առաջարկել է ներդնել շարունակական մասնագիտական զարգացման համակարգ: Երրորդ գլխում անդրադարձ է կատարվել նաև ֆինանսական հաշվետվություն-ների համախմբմանը, մասնավորապես՝ նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու գործընթացին: Իրականացված հետազոտությունները հաշվի առնելով՝ հեղինակը մշակել է նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համա-խմբման մեթոդական ուղեցույց: Անդրադարձ է կատարվել նաև հաշվեգրման հիմունքով բյուջետավորմանը:

Ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն ունենալ ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների շարունակականությունն ապահովելու համար, հաշվի

առնելով, որ ներկայումս ոլորտում առկա են իրականացման ենթակա որոշ աշխատանքներ, որոնց համար համապատասխան մեթոդական գործիքներ կամ ուղեցույցներ առկա չեն:

ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի համապարփակ հետազոտության և դրա կատարելագործման նպատակով կատարված ուսումնասիրությունների արդյունքում հեղինակի կողմից կատարվել են ամփոփ եզրակացություններ, որոնց հիման վրա պատրաստվել են համապատասխան առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերացումներից, որոնց վերաբերյալ կարելի է նշել հետևյալ *դիտողությունները*.

- Աշխատանքի 1.3 բաժնում հիշատակվում է «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարության և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը, որի 27-րդ բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ներդնել կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ (ԿՖԿՏՀ): Միաժամանակ, ԿՖԿՏՀ-ի ներդրման ծրագրի շրջանակում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման հայտարարության համաձայն՝ ԿՖԿՏՀ-ի հիմնական բաղադրիչներից է հանդիսանում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլը, մասնավորապես ֆինանսական հաշվետվությունների համախմբման շրջանակներում: Այդ առումով պետք է նշել, որ աշխատանքում անդրադարձ չի կատարվել ԿՖԿՏՀ-ին՝ որպես ֆինանսական հաշվետվությունների համախմբման ավտոմատացման հիմնական գործիք:
- Աշխատանքում որպես գիտական նորույթ է ներկայացված նախարարությունների մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանություն: Հեղինակի կողմից առաջարկվածը առավել մոտ է մեթոդ կոչվելուն և թերևս մասամբ են ներկայացված դրա գործնական կիրառելիության արդյունքները:
- Ատենախոսության 2.2 բաժինը նվիրված է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկմանը և նշվում է, որ այն կարող է իրականացվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից լիազոր մարմնին ներկայացված ֆինանսական հաշվետվություններում, ինչպես նաև գործառնությունների մատյանում և շրջանառության տեղեկագրում առկա տվյալների հիման վրա: Այդ առումով պետք է նշել, որ 2020թ. սեպտեմբերի 18-

ին ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի համաձայն՝ լիազոր մարմնին է վերապահվում վերը նշված տեղեկատվության մշտադիտարկման գործառույթը, սակայն ատենախոսությունում, ըստ էության, անդրադարձ չի կատարվել այդ օրենքի նախագծի մեկնաբանմանը:

- 2020թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն անդրադառնում է համայնքների համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հարցին: Կարծում ենք, որ ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված հարցերը քննարկելիս հեղինակը պետք է անդրադարձ կատարեր նաև նախագծում նշված հիմնական դրույթներին՝ դիտարկելով դրանց անհրաժեշտությունը:
- Ատենախոսության 2.3 բաժինը նվիրված է ֆինանսական հաշվետվությունների համախմբման միջազգային փորձի ներկայացմանը: Աշխատանքը կշահեր, եթե ուսումնասիրված երկրներից բացի ներկայացվեր նաև ԵԱՏՄ անդամ երկրների փորձը, այդ երկրներում քննարկված հարցերին տրված լուծումները, հաշվի առնելով նաև ԵԱՏՄ անդամ երկրների միջև տարբեր ոլորտներում միասնական շուկաներ ու կանոնակարգումներ սահմանելու ներկայումս ընդունված մոտեցումները:

Եզրակացություն

Ներկայացված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը:

Կ. Ի. Ալավերդյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում արտացոլված են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի առկա իրավիճակը, իրավական կարգավորման արդի խնդիրներն ու ներկայացված են նշված խնդիրների լուծման և համակարգի կատարելագործման ուղիները: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Կարեն Իսմայիլի Ալավերդյանի՝ «ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի

կատարելագործման ուղիները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ,
տ.գ.դ. պրոֆեսոր՝ Հ.Գ. Մնացականյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ
տ.գ.թ.՝ Ռ. Ա. Ալեքսանյան

Ստորագրությունները հաստատում եմ
ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.թ Լ.Ս.Հովսեփյան